

Amundi
Investment Solutions

Trust must be earned

**ՇԱՅԵՐԻ ԲԱՆՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

2025թ. ՀՈՒՆԻՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Նպատակը և կարգավորման շրջանակը.....	2
2.	Շահերի բախման բացահայտում.....	2
2.1.	Շահերի բախման սահմանում	2
2.2.	Շահերի բախման բացահայտում.....	3
3.	Շահերի բախման կանխարգելման և կառավարման համակարգ	4
3.1.	Ամուլնդի խմբի գործունեության հետ կապված շահերի բախումը կանխարգելող միջոցներ	4
3.1.1.	Տեղեկատվական արգելքներ	4
3.1.2.	Խրախուսանքների հետ կապված միջոցառումներ.....	4
3.1.3.	Ֆինանսական գործիքների վերաբերյալ պատվերների տեղադրում և կատարում	4
3.1.4.	Փոխանցումներ հիմնադրամների միջև	5
3.1.5.	Մասնավոր պարտք և վարկային գործունեություն.....	5
3.1.6.	Պատասխանատու ներդրումներ և ԲՍԿ	5
3.1.7.	Ամուլնդիի բաժնետոմսեր.....	7
3.1.8.	Խմբի կամ մայր խմբի ընկերությունների հետ հարաբերություններ.....	7
3.1.9.	Հատուկ արժեթղթերի սահմանափակման կամ բացառման դեպքեր.....	7
3.2.	Անձնական շահերի բախումը կանխարգելող միջոցներ.....	7
3.2.1.	Հաճախորդների նկատմամբ վարքագծի հատուկ կանոններ	7
3.2.2.	Աշխատակիցների վարձատրություն.....	8
3.2.3.	Արտաքին պաշտոններ և արտաքին գործունեություն	8
3.2.4.	Նվերների և օգուտների քաղաքականություն	9
3.2.5.	Անձնական գործարքներ.....	9
3.2.6.	Աշխատակիցների վերապատրաստում և իրազեկում.....	9
3.3.	Շահերի բախման կառավարում.....	9
3.3.1.	Շահերի բախման կառավարման ընթացակարգ	9
3.3.2.	Գրանցամատյան	10
4.	Հաստատված շահերի բախման կարգավորում	10
4.1.1.	Վեճերի լուծման ընթացակարգ	10
4.1.2.	Հաճախորդների ծանուցում.....	10
5.	Մշտական և պարբերական վերահսկողության համակարգ	11
6.	Շահերի բախման կառավարման համակարգի թարմացումներ	11

1. Նպատակը և կարգավորման շրջանակը

Ամունդի խումբը կարող է հայտնվել շահերի բախման իրավիճակներում, մասնավորապես այն դեպքերում, երբ խմբի կամ նրա աշխատակիցների շահերը հակասում են հաճախորդների շահերին:

Համաձայն Ֆրանսիայի դրամավարկային և ֆինանսական օրենսգրքի՝ AMF ընդհանուր կանոնակարգի և Ֆինանսական գործիքների շուկաների և դրանց հետ կապված փաստաթղթերի պահանջների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2014 թվականի մայիսի 15-ի թիվ 2014/65/ԵՄ հրահանգի (այսուհետ՝ «MiFID II»)՝ որոնք պարտավորեցնում են ներդրումային ծառայություններ մատուցողներին գրավոր փաստաթղթավորել և ունենալ շահերի բախման կառավարման արդյունավետ քաղաքականություն, Ամունդի խումբը ներդրել է այս քաղաքականությունը՝ ուղղված շահերի բախման կանխարգելմանը, կառավարմանը և առաջացման դեպքերում՝ դրանց լուծմանը:

Այս քաղաքականության կիրառումն Ամունդի խմբում հաշվի է առնում նրա գործունեության բնույթը, ծավալը և կազմակերպական կառուցվածքը, ինչպես նաև Կրեդիտ Ագրիկոլ խմբին անդամակցությունը:

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել խմբի մոտեցումը՝ կապված իր գործունեության իրականացման ընթացքում առաջացող շահերի բախման բացահայտման, կանխարգելման և կառավարման հետ: Ամունդի խմբի շահերի բախման կառավարման համակարգը հիմնված է հետևյալ միջոցների վրա, որոնք ուղղված են՝

- բացահայտելու այն իրավիճակները, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի
- բախում, որը կարող է վնասել մեկ կամ մի քանի հաճախորդների շահերը,
- կանխելու շահերի բախումը,
- կառավարելու շահերի բախումը,
- հաստատված շահերի բախման հետևանքները հանգուցալուծելու համար:

2. Շահերի բախման բացահայտում

2.1. Շահերի բախման սահմանում

«Շահերի բախում» ասելով հասկացվում է ցանկացած իրավիճակ, երբ ֆիզիկական անձի, իրավաբանական անձի, ընկերության կամ կազմակերպության հայեցողական կամ որոշումների կայացման լիազորությունները կարող են ներազդվել կամ փոփոխվել՝ անկախության կամ ազնվության տեսանկյունից, անձնական նկատառումների, ուղղակի կամ անուղղակի շահերի կամ երրորդ կողմի ճնշումների հետևանքով:

Ընդհանուր առմամբ, շահերի բախում կարող է առաջանալ, երբ իրավիճակը վտանգ է ներկայացնում հաճախորդի շահերի համար: Պոտենցիալ շահերի բախման չորս կատեգորիաներն են՝

Հաճախորդ/Հաճախորդ՝ Ամունդի խմբի որևէ ընկերություն առաջնահերթություն է տալիս մեկ կամ մի քանի հաճախորդների շահերին՝ ի վնաս մյուս հաճախորդների շահերի:

Օրինակ՝ Ամունդի խմբի ընկերությունը, մատուցելով ծառայություններ երկու հաճախորդներին, առավելություն է տալիս մեկին՝ նրա գործարքներին արտոնյալ վերաբերմունք ցուցաբերելով:

Ընկերություն/Հաճախորդ՝ Ամուլնդի խմբի ընկերությունը առաջնահերթություն է տալիս իր սեփական շահերին կամ վերահսկող հարաբերությունների միջոցով կապված ընկերության շահերին՝ ի վնաս հաճախորդների շահերի:

Օրինակներ՝

- Ամուլնդի խմբի ընկերությունը խորհուրդ է տալիս հաճախորդներին այնպիսի ծառայություն, որն ավելի շահավետ է իր համար՝ վնասելով հաճախորդների շահերը:
- Ամուլնդի խմբի ընկերությունը, հաճախորդին ներդրումային ծառայություն մատուցելիս, առաջնահերթություն է տալիս պատվիրակի, ներդրումային ծառայություններ մատուցողի կամ շուկայի միջնորդի շահերին, որոնք պատկանում են իր խմբին կամ Կրեդիտ Ագրիկոլ խմբին՝ ի վնաս հաճախորդի շահերի:

Աշխատակից/Հաճախորդ՝ Ամուլնդի խմբի ընկերության աշխատակիցն առաջնահերթություն է տալիս իր անձնական շահերին՝ ի վնաս ընկերության հաճախորդների շահերի:

Օրինակ՝ աշխատակիցը կատարում է անձնական գործարքներ՝ օգտագործելով հաճախորդի գաղտնի տեղեկատվությունը:

Հաճախորդ/Երրորդ կողմ՝ Ամուլնդի խմբի ընկերությունն առաջնահերթություն է տալիս երրորդ կողմի, օրինակ՝ մատակարարի կամ այլ ծառայություն մատուցողի շահերին՝ ի վնաս իր հաճախորդների շահերի:

Օրինակ՝ Ամուլնդի խմբի ընկերությունը, հիմնվելով իր սեփական շահերի կամ իր բաժնետերերի խմբի շահերի վրա, առաջնահերթություն է տալիս ծառայություն մատուցողի շահերին՝ ի վնաս իր հաճախորդների շահերի:

2.2. Շահերի բախման բացահայտում

Գործող օրենսդրության համաձայն՝ շահերի բախում, որը կարող է վնասել հաճախորդների շահերին, կարող է առաջանալ, երբ Ամուլնդի խումբը, նրա աշխատակիցը կամ փոխկապված ընկերությունը՝

- կարող է ֆինանսական օգուտ ստանալ կամ խուսափել ֆինանսական կորուստներից՝ հաճախորդի հաշվին,
- ունի շահագրգռվածություն հաճախորդին մատուցվող ծառայության կամ հաճախորդի անունից կատարվող գործարքի արդյունքի հարցում, որը տարբերվում է հաճախորդի շահերից,
- ունի ֆինանսական կամ այլ խրախուսում՝ առաջնահերթություն տալու մեկ այլ հաճախորդի (կամ հաճախորդների խմբի) շահերին՝ այն հաճախորդի նկատմամբ, ում մատուցվում է ծառայությունը,
- զբաղվում է նույն բիզնեսով, ինչ հաճախորդը,
- ստանում է հաճախորդից բացի այլ անձից օգուտ՝ կապված հաճախորդին մատուցվող ծառայության հետ, ցանկացած ձևով, բացի այդ ծառայության համար սովորաբար գանձվող միջնորդավճարից կամ վճարներից:

Վերոնշյալ ցանկը սպառնիչ չէ և չի ներառում շահերի բախման բոլոր հնարավոր իրավիճակները: Ամուլնդի խումբը կազմել է շահերի բախման տարբեր սցենարների քարտեզ, որոնք կարող են առաջանալ իր գործունեության ընթացքում և վնասել հաճախորդների շահերին:

Այդ քարտեզը պարբերաբար թարմացվում է:

3. Շահերի բախման կանխարգելման և կառավարման համակարգ

Ամուլնդի խումբը ներդրել է կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք մշակվել են՝ կանխելու և արդյունավետորեն կառավարելու շահերի բախումները, որոնք կարող են առաջանալ իր գործունեության ընթացքում: Այդ ընթացակարգերը մշակված են՝ կարգավորելու այն գործունեությունն ու ծառայությունները, որոնց ընթացքում առաջացել է կամ կարող է առաջանալ շահերի բախում: Դրանք, հետևաբար, ուղղված են ապահովելու, որ պոտենցիալ շահերի բախում պարունակող գործունեություն իրականացնող տարբեր անձինք այն իրականացնեն անկախության համապատասխան մակարդակի պահպանմամբ:

3.1. Ամուլնդի խմբի գործունեության հետ կապված շահերի բախումը կանխարգելող միջոցներ

3.1.1. Տեղեկատվական արգելքներ

Գաղտնի կամ ներքին տեղեկատվության տարածման և օգտագործման հետ կապված շահերի բախման ռիսկերից խուսափելու համար պետք է ձեռնարկվեն անվտանգության միջոցառումներ՝ ձեռնպահ մնալու և գաղտնիության պարտավորություններին համապատասխանելու համար: Այս միջոցառումները սովորաբար հայտնի են որպես «տեղեկատվական արգելքներ»:

Տեղեկատվական արգելքները հիմնականում ներառում են ֆիզիկական, կազմակերպչական, ընթացակարգային և SS արգելքներ, որոնք օգտագործվում են տեղեկատվությունը մասնատելու և գաղտնի ներքին տեղեկատվության անպատշաճ տարածումը վերահսկելու համար՝ ինչպես Ամուլնդի խմբի ներսում, այնպես էլ դրանից դուրս: Հետևաբար, աշխատակիցները պետք է ունենան SS հասանելիություն միայն այն չափով, որն անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվում աշխատակցի ներքին տեղաշարժին:

3.1.2. Խրախուսանքների հետ կապված միջոցառումներ

Ամուլնդի խումբը ներդրել է վերահսկողության և կարգավորման համակարգ՝ կապված ներդրումային ծառայությունների կամ կոլեկտիվ պորտֆելի կառավարման ծառայությունների մատուցման համար ստացված կամ վճարված վարձատրությունների, միջնորդավճարների և ոչ դրամական օգուտների («խրախուսանքների») հետ:

Այդ համակարգը մշակված է՝ կանխելու որևէ շահերի բախում, որը կարող է հանգեցնել նրան, որ շահագրգիռ կողմերից մեկը (տեղաբաշխող կամ արտադրող) չգործի հաճախորդի շահերին համապատասխան:

Ամուլնդի խմբի ընկերությունները բացահայտում և գնահատում են երրորդ կողմերին վճարվող կամ նրանցից ստացվող վարձատրությունները՝ հաճախորդների տեսանկյունից դրանց թափանցիկությունը և հաճախորդների շահերին համապատասխանությունն ապահովելու համար:

3.1.3. Ֆինանսական գործիքների վերաբերյալ պատվերների տեղադրում և կատարում

Ամուլնդի խումբը պարտավոր է հետևել ֆինանսական գործիքների վերաբերյալ պատվերների լավագույն կատարման պահանջին՝ ապահովելու շուկաների ազնվությունը և անհատների համար հնարավոր լավագույն արդյունք ստանալու հնարավորությունը, երբ ներդրումային

ծառայություններ մատուցողը (ՆՏՄ) գործում է հաճախորդների անունից: Այդ նպատակով Ամունդի խումբը մշակել է ընտրության և կատարման քաղաքականություն, որը կիրառելի է ֆինանսական շուկաներում միջնորդների միջոցով շրջանառվող բոլոր ֆինանսական գործիքների համար: Հնարավոր միջնորդների լավագույն կատարումը և ընտրությունը գնահատվում են համապատասխան չափանիշների հիման վրա՝ գին, ծախս, արագություն, գործարքի կատարման և կնքման հավանականություն, պատվերի ծավալ, բնույթ և պատվերի կատարման հետ կապված ցանկացած այլ հանգամանք:

3.1.4. Փոխանցումներ հիմնադրամների միջև

Քանի որ երկու հիմնադրամների միջև ակտիվների փոխանցումները կրում են շահերի բախման բարձր ռիսկ, Ամունդի խումբը ներդրել է ընթացակարգ, որը խստորեն կարգավորում է նման փոխանցումների պայմանները՝ երաշխավորելու համար, որ դրանք իրականացվեն բացառապես երկու հիմնադրամների փայտերերի շահերից ելնելով:

3.1.5. Մասնավոր պարտք և վարկային գործունեություն

Ամունդի խմբի մասնավոր պարտքի և կապիտալ ներդրումների ֆոնդերի կառավարման գործունեությունը պահանջում է հատուկ զգոնություն և վերահսկողության միջոցներ, որոնք հիմնված են, մասնավորապես, գաղտնի տեղեկատվության տիրապետող թիմերի նկատմամբ սահմանվող խիստ տեղեկատվական արգելքների վրա:

3.1.6. Պատասխանատու ներդրումներ և ԲՍԿ

Պատասխանատու ներդրումների սկզբունքն Ամունդի խմբի հենասյուներից մեկն է և հիմնված է երեք հիմնական համոզմունքների վրա՝

- Տնտեսական և ֆինանսական շահագրգիռ կողմերն ունեն պատասխանատվություն հասարակության նկատմամբ:
- ԲՍԿ չափանիշների, ներառյալ կայունության ռիսկերի, ինտեգրումը ներդրումային ընտրություններում պետք է լինի կայուն երկարաժամկետ կատարողականի հիմքը:
- ԲՍԿ պարտավորությունների արագացումը մեր առաջատար աճի խթանիչն է ամբողջ աշխարհում: Ներդրումների նկատմամբ այս պատասխանատու մոտեցումը պահանջում է Ամունդի խմբի կողմից պատշաճ զգոնության, կառավարման և հաղորդակցության հատուկ միջոցների կիրառում, որոնք հիմնված են, ի թիվս այլնի, այդ գործունեության ընթացքում առաջացող շահերի բախման բացահայտման վրա, մասնավորապես՝ կայունության ռիսկերի հետ կապված: Այդ իրավիճակները կանխելու նպատակով Ամունդի խումբը ներդրել է շահերի բախումները կառավարելու համար ԲՍԿ շուրջ կառուցված հատուկ միջոցների շարք, որոնք հիմնված են՝
 - սոցիալապես պատասխանատու ներդրումների թափանցիկ քաղաքականության վրա,
 - մասնագիտացված թիմերի և ռեսուրսների վրա,
 - պատասխանատու ներդրումների նպատակով ստեղծված կառավարման կառուցվածքի վրա, որը ներառում է ԲՍԿ և կլիմայի ռազմավարության կոմիտե, ԲՍԿ վարկանիշային կոմիտե, ԲՍԿ քվեարկության կոմիտե և սոցիալական ազդեցության կոմիտե:

Այս կառուցվածքը հնարավորություն է տալիս Ամունդի խմբին ապահովել, որ ստանձնած պարտավորությունները համապատասխանեն իր ԲՍԿ ռազմավարությանը և զերծ լինեն ցանկացած արտաքին կամ ներքին ազդեցությունից:

ա) Զվեարկության քաղաքականություն

Ամուլնդի խումբը, հիմնադրամների մասով իր քվեարկության իրավունքներն իրականացնելիս, կարող է հայտնվել շահերի բախման իրավիճակում՝ պայմանավորված թողարկողների հետ իր հարաբերություններով:

Այդ հետևանքների հավանականությունը նվազեցնելու նպատակով, ներդրվել են համապատասխան միջոցներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի կանխել և կառավարել այդպիսի ռիսկերը:

Առաջին կանխարգելիչ միջոցը քվեարկության քաղաքականության չափանիշների սահմանումն ու հրապարակումն է, որը հաստատվում է Ամուլնդի խմբի կառավարման ընկերությունների ղեկավար մարմինների կողմից:

Երկրորդ միջոցը ներառում է Զվեարկության կոմիտեին բանաձևերի վերաբերյալ առաջարկվող քվեարկությունների ներկայացումը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովից առաջ հաստատման համար: Այդ բանաձևերը վերաբերում են նախապես կազմված, ցուցակված ընկերությունների ցանկին, որոնք համարվում են զգայուն՝ Ամուլնդի խմբի հետ կապերի պատճառով: Այս զգայուն ընկերությունները, որոնց համար նախապես բացահայտվել է պոտենցիալ «շահերի բախում», սահմանվում են հետևյալ կերպ՝

- Ընկերություններ, որոնք հսկողություն են իրականացնում Ամուլնդի խմբի նկատմամբ կամ պատկանում են Ամուլնդի խմբին,
- Ընկերություններ, որոնք գործընկերներ են Ամուլնդի խմբի հետ,
- Ընկերություններ, որոնք ունեն Ամուլնդիի հետ ընդհանուր ղեկավար/տնօրեն,
- Ընկերություններ, որոնք Ամուլնդի խմբի ամենակարևոր հաճախորդներից են:

Նախապես բացահայտված այդ ընկերություններից բացի, Կորպորատիվ կառավարման թիմը Զվեարկության կոմիտե է ներկայացնում նաև ընդհանուր ժողովներին ներկայացված բանաձևերի վերլուծության հիման վրա առաջացող պոտենցիալ շահերի բախումները:

բ) ԲՍԿ տվյալների մատակարարներ

Ընտրության արդյունքում առաջացող շահերի բախումը կանխելու համար Ամուլնդի խումբը ներդրել է համակարգ՝ տվյալների մատակարարի ընտրության մեթոդաբանության գնահատման և մի շարք գործոնների (գին, որակ, ծածկույթ և այլն) հաշվառման համար: Վերջնական ընտրությունը կատարվում է ԲՍԿ կոմիտեի կողմից՝ ԲՍԿ թիմի կողմից հիերարխիկ հաստատումից հետո:

գ) Վարկանիշներ

Ընկերության ԲՍԿ վարկանիշի բարելավման կամ իջեցման հետևանքով առաջացող շահերի բախումը կանխելու համար Ամուլնդի խումբը ներդրել է ԲՍԿ վարկանիշի խիստ մեթոդաբանություն:

ԲՍԿ վարկանիշը Բ, Ս և Կ առանձին վարկանիշների կշռված միջինն է, ընդ որում յուրաքանչյուր բաղադրիչ ինքնին հանդիսանում է վարկանիշային 38 չափանիշների կշռված միջինը՝ գնահատվելով A-ից մինչև G սանդղակով: Ձեռնարկությանը վերջնականապես շնորհվում է A-ից մինչև G ընդհանուր վարկանիշ: Յուրաքանչյուր թողարկողին շնորհվում է մեկ վարկանիշ՝ անկախ կիրառվող հաշվառման միասնական համակարգից: Ձեռնարկությունների ԲՍԿ վարկանիշերի շնորհումը «ոլորտային չեզոք» է, այսինքն՝ ոչ մի ոլորտ առավելություն կամ թերություն չունի: ԲՍԿ վարկանիշները թարմացվում են ամեն ամիս՝ օգտագործելով մեր վարկանիշային գործակալությունների տրամադրած տվյալները: Թողարկողների ԲՍԿ պրակտիկաների փոփոխությունները մշտապես վերահսկվում են: ԲՍԿ ոլորտի վերլուծաբանները պարբերաբար ճշգրտում են իրենց մեթոդաբանությունը՝ արտացոլելու շրջակա միջավայրի և արդիական իրադարձությունները:

ԲՍԿ վարկանիշի շնորհման կոմիտեն տեղի է ունենում ամեն ամիս: Այն սահմանում և հաստատում է Ամուլնդիի ստանդարտ ԲՍԿ մեթոդաբանությունը: Այն հաստատում է բացառման

քաղաքականությունների և ոլորտային քաղաքականությունների կիրառման կանոնները և վերանայում ԲՍԿ վարկանիշների հետ կապված հարցերը:

3.1.7. Ամուլնդիի բաժնետոմսեր

Ամուլնդիի բաժնետոմսերի առաջնային հրապարակային առաջարկից հետո, Ամուլնդի խմբի կողմից թողարկված բաժնետոմսերի, բաժնետոմսերի ածանցյալ գործիքների, Ամուլնդիի կապիտալին մատչելիություն ապահովող փոխանցելի արժեթղթերի (առաջնային և երկրորդային շուկաներում) և պարտատոմսերի կամ EMTN-ների գործարքները չեն կարող իրականացվել կառավարվող հիմնադրամի (բացառությամբ ինդեքսային հիմնադրամների, որտեղ կրկնակված են Ամուլնդիի բաժնետոմսերը) կամ Ամուլնդիին տրված հայեցողական մանդատի կառավարման մեջ ներգրավված որևէ պորտֆելի կառավարչի կամ թրեյդերի կողմից՝ բացառությամբ Ամուլնդի խմբի կողմից թողարկված կարճաժամկետ կամ միջնաժամկետ շրջանառվող արժեթղթերի:

3.1.8. Խմբի կամ մայր խմբի ընկերությունների հետ հարաբերություններ

Իր ներդրումային կառավարման գործունեության ժամանակ Ամուլնդի խմբի ընկերությունները կարող են առերեսվել շահերի բախման պոտենցիալ ռիսկի՝ խմբի կամ իր մայր խմբի ընկերությունների հետ գործարքներ կատարելիս կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելիս:

Այս շահերի բախման ռիսկը կառավարելու համար Ամուլնդի խումբը ներդրել է ներքին կանոններ և ընթացակարգեր՝ ապահովելու և հարգելու յուրաքանչյուր հաճախորդի շահերի առաջնայնությունը:

3.1.9 Հատուկ արժեթղթերի սահմանափակման կամ բացառման դեպքեր

Շահերի բախումները բացահայտելու և կառավարելու նպատակով, մասնավորապես կորպորատիվ մանդատների կառավարման շրջանակներում, Ամուլնդին կարող է սահմանափակել կամ բացառել որևէ արժեթուղթ իր ներդրումային շրջանակից: Այս դեպքում կառավարող ընկերությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու, որ իր կառավարումը համապատասխանի հաճախորդների լավագույն շահերին:

3.2. Անձնական շահերի բախումը կանխարգելող միջոցներ

3.2.1. Հաճախորդների նկատմամբ վարքագծի հատուկ կանոններ

Բոլոր աշխատակիցները պարտավոր են՝

- ապահովել և հարգել յուրաքանչյուր հաճախորդի շահերի առաջնայնությունը, մասնավորապես՝ իրենց անձնական շահերի և/կամ Ամուլնդի խմբի շահերի նկատմամբ,
- խուսափել այնպիսի իրավիճակներից, որտեղ իրենք պետք է ընտրություն կատարեն իրենց անձնական շահերի՝ լինեն դրանք ֆինանսական, թե այլ բնույթի, Ամուլնդի խմբի շահերի կամ հաճախորդների շահերի միջև,
- հարգել հաճախորդների միջև հավասար վերաբերմունքի սկզբունքը,
- չբացահայտել մի հաճախորդի մասին իրենց հայտնի դարձած գաղտնի տեղեկատվությունը

մեկ այլ հաճախորդի,

- չօգտագործել իրենց սեփական օգտին հաճախորդի մասին տեղեկատվությունը, որը հայտնի է դարձել իրենց մասնագիտական գործունեության ընթացքում: Այս դրույթը չի կիրառվում այն տեղեկատվության նկատմամբ, որը հանրային է կամ դարձել է հանրային:

3.2.2. Աշխատակիցների վարձատրություն

Աշխատակիցների վարձատրության սկզբունքները չպետք է ստեղծեն շահերի բախում՝ խոչընդոտելով նրանց կարողությունը՝ գործելու հաճախորդների լավագույն շահերին համապատասխան: Օրինակ՝ վաճառքի թիրախային ցուցանիշների վրա հիմնված վարձատրությունը չպետք է խրախուսի առաջարկել որևէ կոնկրետ պրոդուկտը՝ հաշվի չառնելով մեկ այլ պրոդուկտ, որը կարող է ավելի լավ բավարարել հաճախորդի կարիքները:

Ամուլնդի խմբի յուրաքանչյուր ընկերություն, իր Մարդկային ռեսուրսների բաժնի պատասխանատվության ներքո և, անհրաժեշտության դեպքում, Համապատասխանության պատասխանատուի հետ խորհրդակցությամբ, պետք է ապահովի, որ համապատասխան աշխատակիցների վարձատրության եղանակը և նրանց վերադասության կարգերը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չհանգեցնեն շահերի պոտենցիալ բախման:

Ամուլնդի խմբի ընկերությունները, հետևաբար, ունեն վարձատրության քաղաքականություններ և պրակտիկաներ, որոնք հաշվի են առնում բոլոր հաճախորդների շահերը՝ ապահովելով, որ կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում այդ շահերը բացասական ազդեցության չենթարկվեն:

Այդ քաղաքականություններն ու պրակտիկաները կանխում են շահերի բախման առաջացումը կամ ցանկացած խրախուսանք, որը կարող է առավելություն տալ աշխատակցի սեփական շահերին կամ Ամուլնդի խմբի ընկերության շահերին՝ ի վնաս հաճախորդի:

3.2.3. Արտաքին պաշտոններ և արտաքին գործունեություն

Ամուլնդի խումբը խրախուսում է իր աշխատակիցներին անձնական հիմունքներով մասնակցել արտաքին գործունեությանը՝ ներառյալ բարեգործական գործունեությունը, կամ զբաղեցնել արտաքին կորպորատիվ պաշտոններ, պայմանով, որ այդ գործունեությունը կամ պաշտոնները չխանգարեն Ամուլնդի խմբի բիզնեսին կամ նրանց պարտականություններին խմբի ներսում և չհակասեն Ամուլնդի խմբի կամ նրա հաճախորդների շահերին: Աշխատակիցները նաև պետք է ապահովեն, որ արտաքին գործունեությունը կամ պաշտոնները չվնասեն Ամուլնդի խմբի հեղինակությանը:

Եթե կա կասկած, որ արտաքին գործունեությունը կամ պաշտոնը կարող է խանգարել Ամուլնդի խմբի ընկերության բիզնեսին կամ խմբի ներսում կատարվող պարտականություններին, կամ եթե կա Ամուլնդի խմբի կամ նրա հաճախորդների շահերի հետ հնարավոր բախում, ապա աշխատակիցները պարտավոր են տեղեկացնել իրենց Համապատասխանության բաժնին: Այս դեպքում Համապատասխանության բաժինը կարող է պահանջել աշխատակցից հրաժարվել այն գործունեությունից կամ պաշտոնից, որը խանգարում է կամ հակասում է Ամուլնդի խմբի ընկերության բիզնեսին կամ Ամուլնդի խմբի կամ նրա հաճախորդների շահերին:

3.2.4. Նվերների և օգուտների քաղաքականություն

Ստացված կամ տրված նվերները և օգուտները կարող են հանգեցնել շահերի բախման, ուստի անհրաժեշտ է խստորեն վերահսկել այդ իրավիճակները:

Աշխատակիցները չպետք է ընդունեն նվեր կամ որևէ այլ օգուտ երրորդ կողմից, որը կարող է նրանց դնել իրենց պարտականությունների հետ հակասության մեջ՝ երրորդ կողմերի (հաճախորդներ, գործընկերներ, մատակարարներ և այլն) կամ Ամուլդի խմբի նկատմամբ: Ստացված նվերների և օգուտների մասին հայտարարությունները պահանջվում են առնվազն տարեկան կտրվածքով:

Տրված կամ ստացված նվերների և օգուտների համար սահմանվում է առավելագույն գումար՝ մեկ գործարար հարաբերության համար տարեկան կտրվածքով: Եթե նվերի կամ օգուտի արժեքը գերազանցում է տեղական պահանջներին համապատասխան սահմանված առավելագույն թույլատրելի գումարը, ապա աշխատակիցը պետք է նախքան այն տալը կամ ընդունելը հիմնավորի դա և ստանա իր ղեկավարի և Համապատասխանության պատասխանատուի թույլտվությունը:

3.2.5. Անձնական գործարքներ

Ամուլդի խմբի բոլոր ընկերությունները, համաձայն իրենց վերաբերող կանոնակարգերի, բացահայտում են այն աշխատակիցներին (բարձրագույն ղեկավարություն, աշխատակիցներ), որոնք կարող են շահերի բախման պոտենցիալ ռիսկ ունենալ կամ հասանելիություն ունեն ներքին կամ այլ գաղտնի տեղեկատվության՝ հաճախորդների կամ պրոդուկտների մասին:

Այս անձինք ենթակա են որոշակի համակարգի հսկողությանը, որի միջոցով վերահսկվում են ֆինանսական գործիքներով նրանց անձնական գործարքները, որոնք նրանք կարող են իրականացնել իրենց սեփական հաշվին՝ աշխատանքային ժամանակից դուրս: Անձնական գործարքների վերաբերյալ այս կանոնները տարբերվում են՝ կախված շահերի բախման ռիսկերին աշխատակիցների ենթարկվածության աստիճանից:

3.2.6. Աշխատակիցների վերապատրաստում և իրազեկում

Բացի շահերի բախման կանխարգելման և կառավարման պաշտոնական քաղաքականության մշակումից, Ամուլդի խումբը ձեռնարկում է քայլեր՝ աշխատակիցներին շահերի բախման մասին իրազեկելու համար: Այդ նպատակով Ամուլդի խմբի աշխատակիցների վերապատրաստման ծրագրում ներառվում է շահերի բախման վերաբերյալ ուսուցում:

3.3. Շահերի բախման կառավարում

Ամուլդի խմբի աշխատակիցները ջանքեր են գործադրում՝ խուսափելու շահերի բախումներից: Այնուամենայնիվ, եթե առաջանում է իրավիճակ, որը կարող է հանգեցնել շահերի պոտենցիալ բախման, ապա աշխատակիցը պետք է անհապաղ տեղեկացնի իր անմիջական ղեկավարին, ինչպես նաև իր ընկերության Համապատասխանության պատասխանատուին:

3.3.1. Շահերի բախման կառավարման ընթացակարգ

Շահերի պոտենցիալ բախման հայտարարված դեպքերը վերլուծվում են համատեղ՝ Համապատասխանության բաժնի և համապատասխան բիզնես ուղղության կողմից:

Այնուհետև, հնարավոր է երկու տարբերակ՝

- Շահերի բախման դեպքը կապված է արդեն նախատեսված սցենարի հետ: Հայտարարված դեպքը կապվում է նախապես բացահայտված շահերի բախման տեսակի հետ: Այդ դեպքի նկատմամբ պետք է կիրառվի նախապես սահմանված վերահսկողության գործընթացը:
- Շահերի բախման դեպքը կապված չէ նախկինում նախատեսված սցենարի հետ: Համապատասխանության բաժնի հետ համատեղ՝ բիզնես ուղղությունը պետք է իրականացնի շահերի բախման վերլուծություն և սահմանի դրա շրջանակը: Այնուհետև նախատեսված ցանկը թարմացվում է շահերի բախման նոր սցենարով:

3.3.2. Գրանցամատյան

Ամուլնդի խմբի բոլոր ընկերությունները պահում և պարբերաբար թարմացնում են գրանցամատյան, որտեղ արձանագրվում են այն իրավիճակները, երբ առաջացել է կամ, ընթացիկ գործունեության դեպքում, կարող է առաջանալ շահերի բախում, որն իր մեջ պարունակում է մեկ կամ մի քանի հաճախորդների կամ հիմնադրամների շահերին էական վնաս հասցնելու ռիսկ:

Խմբի յուրաքանչյուր ընկերության Համապատասխանության պատասխանատուն պահպանում է շահերի բախման գրանցամատյանի արդի տարբերակը և այն հասանելի է դարձնում Խմբի Համապատասխանության բաժնին: Գրանցամատյանում նշված տեղեկատվությունը, ինչպես նաև շահերի բախման առկայությունը հաստատող փաստաթղթերը պահպանվում են կիրառելի կանոնակարգերով սահմանված ժամկետով:

4. Հաստատված շահերի բախման կարգավորում

Երբ շահերի բախումը հաստատվում է, ձեռնարկվում են բոլոր հնարավոր ջանքերը՝ այդ բախումը վերացնելու համար:

4.1.1. Վեճերի լուծման ընթացակարգ

Կազմակերպվում է որոշումների կայացման գործընթաց՝ կախված ներգրավված անձանց կամ ընկերությունների, ինչպես նաև հաստատված շահերի բախման բարդությունից, որպեսզի արագ գտնվի համապատասխան լուծում՝ հաճախորդի շահերին վնաս հասցնելուց խուսափելու համար:

4.1.2. Հաճախորդների ծանուցում

Այն դեպքում, երբ շահերի բախումը կանխելու կամ կառավարելու միջոցները բավարար չեն՝ խելամիտ վստահությամբ ապահովելու համար, որ հնարավոր է խուսափել հաճախորդի շահերին վնասելու ռիսկից, Ամուլնդի խմբի համապատասխան ընկերությունը պարտավոր է տեղեկացնել հաճախորդին առաջացած շահերի բախման մասին:

Այդ ծանուցումը կատարվում է հաճախորդին՝ կայուն կրիչի միջոցով, որը պետք է պահպանվի տվյալ ընկերության նկատմամբ կիրառելի կանոնակարգերով սահմանված պահպանման ժամկետի ընթացքում: Ծանուցումը պետք է լինի բավարար պարզ և մանրամասն, որպեսզի հաճախորդը կարողանա տեղեկացված որոշում կայացնել Ամուլնդի խմբի ընկերության կողմից առաջարկվող ներդրումային պրոդուկտի կամ ծառայության և/կամ օժանդակ ծառայության ձեռքբերման վերաբերյալ:

5. Մշտական և պարբերական վերահսկողության համակարգ

Ամունդի խումբը ներդրել է մշտական և պարբերական վերահսկողության համակարգ՝ ապահովելու շահերի բախման կանխարգելման և կառավարման համակարգի հետ համապատասխանությունը:

Ամունդի խմբի մշտական և պարբերական վերահսկողության համակարգը ներառում է պաշտպանության երեք շերտ՝

- Գործառնական գործառնություններով աշխատակիցների և նրանց անմիջական ղեկավարների կողմից իրականացվող վերահսկողությունները կազմում են վերահսկողության առաջին մակարդակը:
- Համապատասխանության բաժնի կողմից իրականացվող վերահսկողությունները կազմում են վերահսկողության երկրորդ մակարդակը:
- Ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվող վերահսկողությունները կազմում են վերահսկողության վերջին մակարդակը:

Երբ շահերի բախման համակարգերի վերահսկողությունը բացահայտում է թերություններ, մշակվում և կիրառվում են գործողությունների ծրագիր և ուղղիչ միջոցառումներ, որոնք հետագայում վերահսկվում են:

Համապատասխանության վարչությունը տարեկան առնվազն մեկ անգամ կառավարման մարմիններին հաշվետվություն է ներկայացնում շահերի բախման կանխարգելման և կառավարման համակարգի արդյունավետության և մշտադիտարկման վերաբերյալ:

6. Շահերի բախման կառավարման համակարգի թարմացումներ

Շահերի բախման կանխարգելման և կառավարման համակարգը պարբերաբար վերանայվում է խմբի ընկերության Համապատասխանության բաժնի կողմից՝ բոլոր համապատասխան բիզնես ուղղությունների մասնակցությամբ: Այդ վերանայման նպատակն է՝

- ներառել օրենսդրական և կարգավորիչ փոփոխությունները կամ մասնագիտական նոր չափանիշները,
- ներառել ընկերության գործունեության, կազմակերպման, գործընթացների և ընթացակարգերի զարգացումներն ու փոփոխությունները,
- ապահովել պոտենցիալ շահերի բախումները կանխելու կամ կառավարելու համար ներդրված կազմակերպչական կամ ընթացակարգային միջոցների համապատասխանությունն ու արդյունավետությունը, և, անհրաժեշտության դեպքում, կիրառել համապատասխան միջոցներ՝ հայտնաբերված թերությունները շտկելու համար:

«Ամունդի» եզրույթը վերաբերում է ամբողջ աշխարհում Ամունդի խմբին պատկանող ընկերություններին, հոլդինգներին և պատասխանատվություն չի կրում, որը կարող է առաջանալ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվության օգտագործումից: Սույն փաստաթղթի տեղեկատվությունը չպետք է պատճենվի, վերարտադրվի, փոփոխվի, թարգմանվի կամ տարածվի առանց Ամունդիի նախնական գրավոր համաձայնության՝ որևէ երրորդ անձի կամ ընկերության որևէ երկրում կամ իրավասության տարածքում, որտեղ դա կարող է Ամունդիին կամ նրա պրոդուկտը ենթարկել գրանցման պահանջների կամ համարվել անօրինական: Սույն փաստաթուղթը նախատեսված չէ որևէ երկրից կամ իրավասությունից որևէ անձին հաղորդելու կամ նրա կողմից օգտագործելու համար, լինի դա որակավորված ներդրող, թե ոչ, որի օրենքները կամ կանոնակարգերը կարգելեն նման տեղեկատվության հաղորդումը կամ օգտագործումը:

Սույն փաստաթուղթը չպետք է դիտարկվի որպես ներդրումային խորհրդատվություն: Մասնավորապես, այն նախատեսված չէ Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակիչների կամ քաղաքացիների կամ «ԱՄՆ անձանց» համար՝ ինչպես սահմանված է ԱՄՆ 1933 թվականի արժեթղթերի առքուվաճառքի հանձնաժողովի մասին օրենքի «S» կանոնակարգով: Ակտիվների կառավարում, ֆրանսիական «Société par Actions Simplifiée» (SAS)՝ 1,143,615,555 եվրո կապիտալով, պորտֆելի կառավարման ընկերություն, հաստատված AMF-ի կողմից GP04000036 համարով: Գրանցված գրասենյակ՝ 91-93, boulevard Pasteur, 75015 Փարիզ, Ֆրանսիա, 437 574 452 RCS Փարիզ: Սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը համարվում է ճշգրիտ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ (աղբյուր՝ Ամունդի) – amundi.com: